ԱԶԳԱՅԻՆ

Յունիսի 9ին, Մեծին Ներսիսի տօնի օրը, Նորին Օծութեան օրհնութեամբ Ճեմարանի սաներից չորս հոգի Ձեռնադրուեցան աւագ սարկաւագ: Ձեռնադրողն էր Սրբազան Սարգիս Եպիսկոպոս Տէր-Գասպարեան. խարտաւիլակն էր Արժ. Հայր Նահապետ աբեղայն: Ձեռնադրուողներն էին Գ. լսարանի ուսանող Ստեփաննոս Եղիազարեան Ղազանֆարցին և Ա. լսարանի ուսանողք Սողոմոն Սողոմոնեան Քեօթայեցի, Լևոն Գանջեցեան Շուշեցի և Լուսեղէն Զոհրաբեան Մեծ Սալացի: Վերջին երկուսները Ձեռնադրութեան ժամանակ փոխուեցան — Լևոնն — Ղևոնդ և Լուսեղէնն — Յուսիկ կոչուեցան: Տայ Աստուած շնորհք և կարողութիւն նոր ուխտեալներին իրանց ստանձնած լուծը յօժարութեամբ և սրբութեամբ տանելու, յօգուտ Ս. Եկեղեցւոյ և ազգին ապագայում:

ՊԱՏՏՕՆԱԿԱՆՔ

ԿԱՂԻՈԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

2 Յունիսի, Նոր — Նախիջևանի Սարգիս քահանայ Մաքսըմաճեան ուղարկուում է ապաշխարութեան Հին Խրիմի Ս. Խաչ վանքը, անորոշ ժամանակով, իւր գայթակղեցուցիչ և անվայել ընթացից համար:

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ: